

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՐՈՎ

ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԶԱՐՅԵՐ

Եկիրված նմանաչափ հայագիտ-կովկասագիտ Պավել
Չոբանյանի ծննդյան 75-ամյակին

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՐՈՎԱԾՈՒ

PROCEEDINGS

INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE

PROBLEMS OF THE
HISTORY OF THE CAUCASUS

Dedicated to The 75th Anniversary
of Prof. Pavel Chobanyan

9(47.922)

Գ-67

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

հ2 ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

6495

ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ճանաչված հայազետ-կովկասազետ Պավել Չոբանյանի
ծննդյան 75-ամյակին նվիրված

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԵՎԱՆ, ՄԱՐՏԻ 15-16, 2023

2023



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF
ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES
INSITUTE OF HISTORY

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

PROBLEMS OF THE HISTORY OF THE CAUCASUS

PROCEEDINGS OF THE
INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE

Dedicated to
The 75th Anniversary of Prof. Pavel Chobanyan

YEREVAN, 15-16 MARCH, 2023

2023

ՀՏԴ 94(479)(082)
ԳՄԴ 63.3(5)Գ43
Կ 767

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ
Published by the decision of the Scientific Council of the Institute
of Oriental Studies of NAS RA

Կովկասի պատմության հիմնահարցերը: Ճանաչված
Կ 767 հայագետ-կովկասագետ Պավել Չոբանյանի
(1948-2017 թթ.) ծննդյան 75-ամյակին նվիրված
Միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան, մարտի
15-16, 2023.- Եր.: ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտ, 2023.- 92 էջ:

Միջազգային գիտաժողովը իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ
Գիտության կոմիտեի «21T-6A163» թեմատիկ ծրագրի
աջակցությամբ:
The International Conference was organized within the
framework of the grant project «21T-6A163» financed by Ministry
of Education, Science, Culture and Sports RA, Science Committee.

ՀՏԴ 94(479)(082)
ԳՄԴ 63.3(5)Գ43

DOI: [10.54503/978-9939-9012-8-2](https://doi.org/10.54503/978-9939-9012-8-2)

ISBN 978-9939-9012-8-2

© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2023

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ / ORGANIZING COMMITTEE

Ռոբերտ Ղազարյան – ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտ

Robert Ghazaryan – Institute of Oriental Studies of NAS RA

Քրիստինե Կոստիկյան - ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտ

Kristine Kostikyan - Institute of Oriental Studies of NAS RA

Գևորգ Ստեփանյան - ՀՀ ԳԱԱ, պատմության ինստիտուտ

Gevorg Stepanyan – Institute of History, NAS RA

Գոհար Մխիթարյան – ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտ

Gohar Mkhitaryan - Institute of Oriental Studies of NAS RA

Էդիկ Մինասյան - Երևանի Պետական Համալսարան,
պատմության ֆակուլտետ

Edik Minasyan – Yerevan State University, Faculty of History

Աշոտ Մելքոնյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Ashot Melkonyan – Institute of Oriental Studies of NAS RA

Էդուարդ Զոհրաբյան – ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ

Eduard Zohrabyan – YSU, Faculty of History

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ / EDITORIAL BOARD

Գևորգ Ստեփանյան - ՀՀ ԳԱԱ, պատմության ինստիտուտ

Gevorg Stepanyan – Institute of History, NAS RA

Քրիստինե Կոստիկյան - ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտ

Kristine Kostikyan - Institute of Oriental Studies of NAS RA

Գոհար Մխիթարյան – ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտ

Gohar Mkhitaryan - Institute of Oriental Studies of NAS RA

Բովանդակություն

Արթուր Մաթևոսյան

Ս. Երրորդության դավանանքը Եզնիկ Կողբացու "Առ
Երանելի Մաշտոց վարդապետ" թղթում.....12

Մարիամ Զխարթիշվիլի

«Գիրք թղթոցի» Ատրնեբսեի իշխանի նույնանձնացումը և
VI-VII դարերի Վրաստանի քաղաքական պատմության
վերանայման փորձ.....14

Ալեքսան Յակոբեան

Մահակ Չորոփորեցի կաթողիկոսի ուղեւորությունը Ասորիք
և նրա ունեցած հայ-աղուանական տեղեկանու խնդիրը...17

Նանա Կադարիա

Վրացական պատմագրական աղբյուրների տեղեկություն-
ները Ս. Շուշանիկի մասին.....20

Գաբրիել Նահապետյան

Բյուզանդական կայսրության Այսրկովկասյան քաղաքակա-
նությունը պատկերամարտության առաջին փուլում.....23

Արեգ Վարդանյան

Դիտարկում միջնադարյան վրաց քաղաքական մի
գաղափարի շուրջ.....25

Կարինե Ավետյան

Թովմա Մինասենց, ԺԵ դարի տարեգիր.....28

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի առևտրական ուղիները Ժ.-ԺԴ.
դարերում.....30

Անի Մարգարյան

Պարսկական մանրանկարը՝ որպես Արևելքի և Արևմուտքի
միջև առևտրային և մշակութային երկխոսության համա-

տեքստում չինական ճենապակու դերի բացահայտման բանալի.....32

Գեորգի Միրզաբեկյան

Ընդարձակ հարկամատյաններ կազմելու գործում օսմանյան իշխանությունների քաղաքականության որոշ օրինաչափությունների շուրջ (1590 թ. Երևանի վիլայեթի օրինակով).....34

Թամար Աբուլաձե, Հելեն Գիունաշվիլի

Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի Ազգային Կենտրոնի հավաքածուի վրացերեն-պարսկերեն և պարսկերեն անտիպ փաստաթղթերը.....37

Ժիլբերթ Մեշքանբաբյանս

Մեֆյան Իրանի հարկահանման գործընթացը համաձայն XVI-XVIII դարերի հայ պատմագիրների աշխատությունների և ժամանակաշրջանի այլ սկզբնաղբյուրների.....39

Գևորգ Ստեփանյան

Հայ և օտար աղբյուրները Ապշերոնյան թերակղզու և Բաքու քաղաքի հայերի մասին (վաղ ժամանակներից մինչև XVIII դարը ներառյալ).....43

Սովիո Կադագիշվիլի

Տարածքը և սրբությունը միջնադարյան վրացական պատմական աղբյուրներում.....47

Գոհար Մխիթարյան

Ջոզեֆ դե Լա Պորտեի «Աշխարհի ճանապարհորդողը կամ Հին ու Նոր աշխարհի մասին գիտելիք» աշխատությունը որպես Կովկասի և Իրանի ԺԸ դարի պատմության սկզբնաղբյուր.....49

Դավիդ Մերկվիլաձե

Վրացական պատմության մասին հարկման հարցերը և վրացական պատմության մասին հարկման հարցերը.....51

Քարթլի- Կախեթի Հերակլ Բ թագավորի ծրագրերը ռուսական զորքերի դեպի Դաղստան կատարած 1775 թ. արշավանքի կապակցությամբ.....51

Մեսյուս Ասլանեան

«Փունջ մը մագ եւ ընկղմած տապանաքար: Նոր մտորումներ Շահամիրեան գերդաստանի անձանօթ պատմութեան շուրջ».....54

Անահիտ Թովմասյան

Օսմանյան կայսրության քաղաքականությունը Արևելյան Այսրկովկասում և Դաղստանում XVIII դարի երկրորդ կեսին - XIX դարի սկզբին.....56

Քրիստինե Կոստիկյան

Ջիգյան և քրիստոնյաներից գանձվող մյուս հարկերը Արևելյան Այսրկովկասում ԺԸ դարում և ԺԹ դարի առաջին կեսին.....58

Անուշ Հովհաննիսյան

Միգրացիոն քաղաքականությունը՝ որպես ռուս-թուրքական սրբակցության գործիք Կովկասում (Կովկասյան մեծ պատերազմի ժամանակաշրջանից մինչև 19-րդ դարի վերջ).....60

Բենիամին Մախյան

Աջարական հարցը վրաց-թուրք-ադրբեջանական հարաբերություններում (1918-1921 թթ.).....63

Ազատ Բոզոյան

Այսրկովկասի պատմության խնդիրների հետազոտությունը Պավլիկ Չոբանյանի աշխատություններում.....66

Լուսինե Ղուշչյան

Լոբին Քալանթար- Ռուսական թանգարանի ազգագրության բանկի հավաքածուների գրանցող և ֆոնդի կազմող Ալեքսանդր Գ կայսեր օրոք Ի. դարի սկզբին.....68

Վերա Մահակյան

Կովկասյան առաքելությունը «Թեղքիլաթ-ը մախսուսա»
կազմակերպության գործունեության ծիրից ներս.....71

Ջուրաբ Թարգամաձե

Միացյալ Կովկասի գաղափարը. պատմական և
քաղաքական ակնարկ.....75

Մանուչար Գունցաձե

Մոցիալ-տնտեսական խնդիրը Վրաստանի
Դեմոկրատական Հանրապետությունում (1918-1921).....77

Մարիամ Բեժիտաշվիլի

Քաղաքացիական ակտիվության դերը 'մենք' խմբի ազգային
համախմբման գործում. ինգուշական իրականություն (1956-
2022 թթ.).....78

Արշալույս Տետեյան

Մայրենի լեզվի կարգավիճակի խնդիրը ԽՍՀՄ
Անդրկովկասյան հանրապետություններում 1970-ական
թթ.....81

Քրիստինե Մելքոնյան

Թուրքիայի կրթամշակութային քաղաքականությունը
Հարավային Կովկասի երկրներում.....84

Վիլեն Մնացականյան

Հարավային Կովկասի երկրները գլոբալ և տարածքային
խաղացողների գեոքաղաքական և տնտեսական շահերի
բախման կիզակետում.....87

Էրիկ Հակոբյան

Հայ-վրացական «եղբայրության» գաղափարը երկու ժողովուրդների
քաղաքական նպատակների տեսանկյունից.....90

CONTENTS

Arthur Matevosyan

Dogma of St. Trinity in Eznik of Kolb's letter "To the Blessed
Archimandrite Mashtots".....12

Mariam Chkhartishvili

Identification of Nobleman Atrnerseh (Իշխան Ատրներսեհ) of the
"Book of Letters" and Revisiting Political History of Georgia in 6th-
7th Centuries.....14

Aleksan Hakobian

The Journey of Catholicos Sahak Dzoroporetsi to Syria and the
problem of the Armenian-Albanian information he had.....17

Nana Kadarria

The Information of Georgian historiographical sources about St.
Shushanik.....20

Gabriel Nahabetyan

The Policy of Byzantine Empire in the Transcaucasia in the First
Stage of Iconoclasm.....23

Areg Vardanyan

A note concerning a political idea in Medieval Georgia.....25

Karine Avetyan

Tovma Minasents, the Annalist.....28

Elina Ghazaryan

The Trade Routes of the South Caucasus in the 10th-14th Centuries.30

Ani Margaryan

A Persian Miniature Painting as a key to unlocking the role of the
Chinese porcelain in the East-West commercial and cultural
dialogue.....32

Georgi Mirzabekyan

About some tendencies in the policy of the Ottoman authorities
in compiling the Tax Registers (with the example of The Great
Defter of Yerevan Vilayet 1590).....34

Tamar Abuladze, Helen Giunashvili

The 17th Century Unpublished Georgian-Persian and Persian Documents from the Collections of the Korneli Kekelidze National Centre of Manuscripts.....37

Jilbert Meshkanbarians

The Safavid Iran's Taxation Process According to 16th-18th centuries Armenian Historians and Other Sources of the Period.....39

Gevorg Stepanyan

Armenian and Foreign Sources about the Armenians in Apsheron Peninsula and the town Baku.....43

Sopio Kadagishvili

Territory and Sacredness in the Medieval Georgian Historical Sources.....47

Gohar Mkhitaryan

Joseph De La Porte's "The World Traveller or Knowledge of the Old and New World" as a Source on the History of the Caucasus and Iran in the 18th Century".....49

David Merkviladze

The Plans of Erekle II, the King of Kartli-Kakheti as regards the campaign of Russian troops in Daghestan in 1775.....51

Sebouh Aslanian

A Lock of Hair and a Sunken Tombstone: New Reflections on the Unknown History of the Shahamirian Family of Madras.....54

Anahit Tovmasyan

The policy of the Ottoman Empire in Eastern Caucasus in the 18th and 19th Centuries.....56

Kristine Kostikyan

Jizya and Other taxes Levied on Christians in Eastern Transcaucasia in the 18th and the Beginning of 19th Century.....58

Anush Hovhannisyan

Migration Policy as an Instrument of Russian-Turkish Rivalry in the Caucasus (from the period of the Great Caucasian War to the end of the 19th century).....60

Benyamin Mailyan

The Adjarian question in Georgian-Turkish-Azerbaijani relations (1918-1921).....63

Azat Bozoyan

Research on the problems of the history of the Caucasus in Pavlik Chobanyan's works.....66

Lusine Ghushchyan

A. Loris Kalantar- Registrar of the Collection and Creator of the Fund of Ethnographic Department in Russian Museum of Emperor Alexander III at the beginning of 20th Century.....68

Vera Sahakyan

Caucasian Mission in the scope of the "Teshkilat-i Mahsusa" Organization's operation.....71

Zurab Targamadze

The idea of a united Caucasus: Historical and Political Discourse...75

Manuchar Guntsadze

Socio-economic Issue in the Democratic Republic of Georgia (1918-1921).....77

Mariam Bezhitashvili

On the Role of Civil Activism in the Consolidation of National 'We-Group': The Ingush Reality (1956-2022).....78

Arshaluys Teteyan

Problem of the Mother language Status in the Transcaucasian Republics of USSR in 1970s.....81

Christine Melkonyan

Cultural and Educational Policy Of Turkey in the Countries of the South Caucasus.....84

Vilen Mnatsakanyan

Countries of the Southern Caucasus at the intersection of Geopolitical and Economic Interests of Global and Regional Players.....87

Erik Hakobyan

The Idea of Armenian-Georgian 'brotherhood' from the viewpoint of two people's political aims.....90

ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայաստան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ,
Պ.գ.թ., ավագ գիտաշխատող, archudo7@gmail.com

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՆԱՆՔԸ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ

«ԱՌ ԵՐԱՆԵԼԻ ՄԱՇՏՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ» ԹՂԹՈՒՄ

«Գիրք թղթոց»-ում պահպանվել է Եզնիկ Կողբացու «Առ երանելի Մաշտոց վարդապետ» թուղթը, որը 5-րդ դարի հայ Եկեղեցու դավանանքը արտացոլող կարևոր փաստաթղթերից մեկն է: Հայ Եկեղեցու դավանաբանական համակարգի հիմքում ընկած է Նիկիո հանգանակի այն դրույթը, որի համաձայն Աստված մի էություն է և երեք Անձնավորություններ: Դա նշանակում է, որ միեղեն Աստված հավիտյան անձնավորված է Հոր, Որդու և Ս, Հոգու Դեմքերի մեջ: Յուրաքանչյուր Դեմք իր մեջ է պարունակում աստվածային էության լիությունը, ուստի երեք Անձնավորությունները հավասարապես կատարյալ Աստված են, սակայն ոչ թե երեք Աստվածներ, այլ մի Աստված Դա այդպես է, քանզի աստվածային էությունը միեղեն է, ու Դեմքերից անկախ գոյություն չունի:

Մարդ-Աստծո մասին քրիստոնեական վարդապետությունը իմաստ ունի լոկ այն դեպքում, եթե ճանաչվում է Հիսուսի մեջ մարդեղացած Բանի աստվածային բնությունը: Դրա համար անհրաժեշտ է, որ Ս.Երրորդության բոլոր Անձերը լինեն համագո և հավասարապես կատարյալ: Որդին

Նույնքան Աստված է, որքան Հայրը, ու նրան են պատկանում Հորը վերագրվող բոլոր ատրիբուտները: Թեև Հայրը Որդու կեցության պատճառն է, Որդու ծնունդը ոչ մի դեպքում չի կարելի համարել Հոր կամային ակտի հետևանք: Դա հավերժական և անճառելի ծնունդ է, որն անհրաժեշտաբար կատարվում է աստվածային բնության անդրանցական խորքերում: Միաձին Որդին Հորից ծնվում է հավիտենականության մեջ, և ունի Հոր բոլոր հատկությունները բացի չծնված լինելուց: Նույն հավիտենականության մեջ բխում է Հորից և Ս. Հոգին: Դա չի նշանակում, որ Ս. Երրորդության Դեմքերի միջև կա ժամանակային հաջորդականություն: Նրանք համարուն են ու համապատիվ, ունեն նույն բնությունը, գորությունը և կամքը: Դեմքերը երեքն են, բայց Աստված մի է:

4. Գեորգիանոսի Գլխի աստուծո՞վ կարգավորվում է

Գեորգիանոսի Գլխի աստուծո՞վ կարգավորվում է...
Գեորգիանոսի Գլխի աստուծո՞վ կարգավորվում է...

MARIAM CHKHARTISHVILI

Georgia,

Doc. Professor, Ivane Javakhishvili Tbilisi State University,

Ivane Javakhishvili Institute of History and Ethnology,

mariam.chkhartishvili@tsu.ge

IDENTIFICATION OF NOBLEMAN ATRNERSEH (ატრნერსე) AND
USULSUSUBS) OF THE "BOOK OF LETTERS" AND
REVISITING POLITICAL HISTORY OF GEORGIA IN 6TH-
7TH CENTURIES

1. "The book of Letters" is a collection of correspondences of Armenian ecclesiastical and lay hierarchs. It covered period from 5th to 13th centuries. These texts provide valuable information for Caucasian political and cultural history and are often used as sources. The part of letters reflects polemics on dogmatic as well as other issues between Armenian and Georgian political workers. This controversy took place at the turn of 6th-7th centuries.

2. In this presentation I intend to elaborate on one letter by Georgian Catholicos Kirion¹ addressed to the Marzban Smbat. It is dated by the beginning years of 7th century. In the introductory part of the letter Kirion passes regards to Smbat from him personally and also from Georgian nobility in general. Names of two noblemen are given: Atrnerseh and Ashushan. It is clear these three persons

¹ Kirion was Catholicos of Kartli. *Kartli* was a term used for referring to the Georgian premodern state as well as Georgian ethnic community

(Kirion proper, Athrerseh and Ashushan) have to be considered as official presenters of Georgian side.

3. Ashushan/Arshusha was name worn by the family members of vitaxae² (pitiaxshi - პითიახში) of Kartli. Thus, it is not problematic at all to guess that Ashushan was vitaxae of Kartli. At the first glance the situation with Atrnerseh seems similar. According to widespread in academic circles opinion Atrnerseh should be identified with the third presiding prince (erismtavari - ერისმთავარი) of Kartli Adarnerse. Information on him is preserved in Georgian narrative as well as epigraphic sources. However, I think that identification Adarnerse with Atrnerseh is a wrong conclusion despite the fact that I am sure Atrnerseh and Adarnerse are two forms of one and same name. The Georgian nobleman mentioned the "Book of Letters" cannot be presiding prince Adarnerse because his name is given after the name of Catholicos. This fact excludes possibility of his identification with the person being holder of supreme lay power in Georgian state.

4. Georgian hagiographical monument "Martyrdom of Saint Eustathius of Mtskheta" represents the specific epoch when Kartli was ruled directly by Iranian officials. In this writing one can find information on three Georgian noblemen who leded Georgian delegation in face of Marzban: the first one was Catholicos Samuel, the second - Mamasaxlisi (father of the house, მამასახლისი) Grigol and the last one - vitaxae Arshusha. If we compare this

² The vitaxaes of Kartli (of so called Lower Kartli). actually, were the eristavs. i.e. governors of administrative unites of Georgian state, though the vitaxaes were enjoying far greater autonomy than ordinary Eristavs

“triumvirate” with one presented in the “Book of Letters” it would be not difficult to notice that the first and the third positions (Catholicos and vitaxae) in both coalitions coincides with each other. Hence, the second position also should be identical. Thus, we can conclude that Atrherseh was mamasaxlisi.

5. Actually, both above-mentioned sources reflect one and same political situation in Kartli. The distinguishing feature of this situation is an absence in the country of national supreme lay power and because of this unusual political activity of noblemen led by Catholicos, Mamasaxlisi and Vitaxae. The identification of Atrnerseh with mamasaxlisi of Kartli drastically changes accepted chronology of enthronement of Georgian presiding princes and consequently paves way for reconceptualization of political history of Georgia in 6th-7th centuries.

ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

Հայաստան

ՀՀ ԳԱԱ Արևելալազիտության ինստիտուտ,
Պ.գ.դ., գլխավոր գիտաշխատող, jakobalex@yahoo.com

**ՄԱՀԱԿ ՉՈՐՈՓՈՐԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԱՍՈՐԻՔ ԵՒ ՆՐԱ ՈՒՆԵՑԱՄ ՇԱՅ-
ԱՂՈՒԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՈՒ ԽՆԴԻՐԸ**

Պատել Չոբանեանին նուիրուած գիտաժողովին ներկայացուող իմ զեկուցման թեման առնչուում է մեր աւագ ընկերոջ հետաքրքրութիւնների մի կարեւոր ոլորտի՝ վաղ եւ ուշ ուղեգնացութիւնների քննութեանը, ինչին նա անդրադառնում էր ամեն յարմար առիթով: Դրանցից մէկն էր Ը դարի սկզբին դէպի Ասորիք Հայոց կաթողիկոս Սահակ Չորոփորեցու (677/8-703 թթ.) յաջող դիւանագիտական ուղեւորութիւնը, ում ծրագրային նամակը արդէն ծերունազարդ Վեհափառի մահուանից յետոյ Խառանում պատրաստակամօրէն ընդունել էր Օկբայ արաբ ոստիկանը: Ընդ որում, չնայած հայագիտական հանրութեանը ծանօթ բազմաթիւ փաստերին՝ Սահակ Չորոփորեցու ուղեւորութիւնը չի դարձել պատմագիտական մանրակրկիտ քննարկման առարկայ:

«Մատենագիրք Հայոց»-ում Պ. Չոբանեանը վերահրատարակել է վաղ միջնադարեան մի ուշագրաւ գրութեան բնագիր, որը հանգամանալից նկարագրում է

Երուսաղեմի վանքերն ու եկեղեցիները: Դա Անաստաս վարդապետ Յերապոլսեցու կազմած «Վասն վանորէից Հայոց, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղեմ» փոքրածաւալ երկն է, որից քաղուածաբար օգտուել է նաեւ Մովսէս Դասխուրանցին՝ շարադրելով իր «Պատմութիւն Ադուանից»-ի Բ գրքի ԾԲ գլուխը: Ենթադրելի է, որ Ժ դարի վերջի մեր պատմիչի օգտագործած տոհմամատեան-ժողովածոյում դրա կողքին է եղել նաեւ Անանուն հեղինակի՝ «Վասն որ ի սուրբն Երուսաղեմ եկեղեցոյ շինուածք՝ թուով եւ չափով հիմնադրելով» վերտառութեամբ գրուածքը: Թերեւս, այդ երկուսը միեւնոյն ծագումն ունեն եթէ ոչ հեղինակի, ապա գոնէ ստեղծման հանգամանքների առումով:

Ըստ այդմ, Անաստաս վարդապետի եւ Անանունի ցուցակների կազմումն աւելի հաւանական է կապել 703 թ. Մահակ Չորոփորեցի կաթողիկոսի դէպի Ասորիք կատարուած ուղեւորութեան նախապատրաստման հետ, երբ գիտակ վարդապետներին հաւանաբար պատուիրել էին ինչ-ինչ տեղեկանք-ուղեցոյցներ կազմել մեկնողների համար: Նշուած գործի մասին առաւել մանրամասն գրող Ղեւոնդ պատմիչի եւ Կարծեցեալ Շապուհ Բագրատունու տեղեկանուց երեւում է, որ Դամասկոսում արաբ խալիփային այցելելուց յետոյ կաթողիկոսի խմբի ուղեւորութիւնը նախատեսուած էր հասցնել մինչեւ Երուսաղեմ, թէպէտ վեհափառի մահուան պատճառով դա յաջողուեց անել միայն նրա ուղեկիցներից ոմանց: Շապուհին վերագրուող «Պատմութեան» մի պահպանուած կտորում այս առիթով յիշա-

տակում է Վահան Կամսարական (ձեռագրում՝ Կամեսական) իշխանի անունը, որը դժուար չէ ենթադրաբար գուգադրել մի կողմից՝ Անաստաս վարդապետի գրութեան պատուիրատու Համազասպ Կամսարականի, միւս կողմից՝ Մովսէս Դասխուրանցու մօտ պահպանուած տարբերակում յիշատակուած Վահան Մամիկոնեանի անունների հետ □

Այս տիպի՝ դեռ մեծապէս վարկածային եզրայանգումները, որոնց խնդրառութիւնը փորձել եմ ներկայացնել նաեւ զեկուցման վերնագրում, հաճելի եւ օգտակար էր քննարկել ամենալայն հետաքրքրութիւններ ու մտահորիզոն ունեցող Պաւել Չորանեանի հետ: Աւա՛ղ, այժմ դրանք պիտի քննարկենք առանց նրա:

НАНА КАДАРИЯ

Грузия,

Тбилисский государственный университет имени Ив.

Джавахишвили, докторант, nana.kadaria@tsu.ge

СВЕДЕНИЯ ГРУЗИНСКИХ ИСТОРИОГРАФИЧЕСКИХ ИСТОЧНИКОВ О СВЯТОЙ ШУШАНИК

Святая Шушаник является важным персонажем истории Грузии поздней античности. Будучи этнически армянкой (происходила от знатного армянского рода Мамиконянов) она стала женой грузинского вельможи питиахша Варскена. Варскен был правителем одного из административных единиц катлийского (Картли - древнее название Грузии) царства, т.н. *Нижней Картли*. Варскен из-за политических соображений принял маздеизм и хотел, чтоб его жена тоже оставила христианство. Святая Шушаник не сменила веру и за неповиновение мужу была замучена. Ее мученическая смерть оставила глубокий след в грузинской исторической памяти и была зафиксирована в грузинских агиографических и историографических памятниках.

Целью нашего доклада является анализ тех сведений

Святой Шушаник, которая совершила в грузинских историографических памятниках. Конкретно, мы коснемся памятника: "Обращение Грузии".

"Жизнь Грузии" (*Картлис цховреба*) и "Описание царства грузинского" историка XVIII века Вахушти Багратиони.

"Обращение Грузии" — это памятник, имеющий сложную композицию. Он состоит из исторической хроники и двух редакций жития просветительницы Грузии св. Нино. Учеными этот памятник датируется по разному: V, VII, IX вв. Сведения о Св. Шушаник в этом памятнике имеет форму краткого замечания.

Что касается "Жизни Грузии", то этот памятник является сборником историографических сочинений. Его составление ученые связывают с эпохой великого грузинского царя Давида Строителя (1089-1125). Сведения связанные Св. Шушаник в этом памятнике более пространны чем в "Обращении Грузии". Эти сведения в основном касаются факта наказания Варскена грузинским царем.

В труде Вахушти Багратионе представлено аналогичное описание фактов.

Отличительной чертой всех вышеназванных источников является хронология: грузинскому царю Бакуру приписывается наказание Варскена. А этот царь жил во второй половине VI века. Такова древнегрузинская историографическая традиция о жизни св. Шушаник.

В XIX веке был издан труд церковного деятеля М.

с эпохой царя Вахтанга Горгасали, т.е. с V веком. В последствии эта хронология была разделена большинством грузинских ученых. При этом большинство из них полностью игнорировало данные вышеназванных источников. Только очень незначительная часть ученых постаралась дать объяснение существующей в древнегрузинской историографии традиции и выяснить источниковедческую ценность этих сведений.

В докладе будет представлена попытка как-то восполнить этот пробел. С этой целью будут подробно рассмотрены как сведения источников, так и научные труды по исследуемому вопросу и на основании всех имевшейся данных будут представлены выводы и предположения автора.

ԳԱԲՐԻԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայաստան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ,
ասպիրանտ g.nahapetyan90@gmail.com

ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ

Բյուզանդական կայսրությունը Ը դարի սկզբին գտնվում էր բավականին ծանր վիճակում՝ պայմանավորված արաբական արշավաքնների ինտեսիվացմամբ: Արաբները, զարգացնելով իրենց ռազմական հաջողությունները, կարողացան նույնիսկ երկրորդ անգամ 717 թվականին պաշարել Կ.Պոլիսը և թվում էր, թե մոտ էր բյուզանդական կայսրության մայրամուտը: Բյուզանդական կայսրությանը կործանումից փրկեց զանիս հաստատված Իսավրյան արքայական նոր դինաստիայի հիմնադիր Լևոն Գ-ը: Որոշ հետազոտողներ կարծում են, որ Լևոն Գ-ի հերոսական դիմադրության արդյունքում փրկվեց ոչ միայն խորը ճգնաժամ ապրող Բյուզանդիան, այլև Եվրոպան և նույնիսկ քրիստոնեական քաղաքակրթությունը:

Կ. Պոլսի պաշարման ճախողման մեջ մեծ դերակատարություն ունեցավ ոչ միայն արաբների կորուստները, այլև նաև Լևոն Գ-ի դաշնակցությունը յազարների հետ, որոնք, Կ.Պոլսի պաշարման ժամանակ

նակ արշավելով Անդրկովկաս, սկսեցին անհանգստացնել արաբներին՝ ստիպելով իրենց ուշադրության դաշտում պահել նաև անդրկովկասյան ճակատը: Բյուզանդա-խազարական դաշնակցություն էլ ավելի է ամրապնդվում, երբ Լևոն կայսրն իր որդուն՝ Կոստանդին Ե-ին 732 թվականին ամուսնացնում է խաքանի դստեր հետ: Բյուզանդա-խազարական դաշնակցությունը շարունակվեց Կոստանդին Ե-ի օրոք ևս: Արտաքին ճակատում արաբներին հակազդելը տեղի էր ունենում ներքաղաքական բավականին լարված վիճակում, ինչը պայմանավորված էր Լևոն Գ-ի և Կոստանդին Ե-ի վարած պատկերամարտական քաղաքականությամբ և կայսրերի դեմ դավադրությունների կազմակերպմամբ:

Խազարները պարբերաբար արշավանքներ էին կազմակերպում դեպի Այսրկովկաս և մինչև 737 թվականը լուրջ անհանգստություն էին պատճառում արաբներին: Խազարական վտանգի չեզոքացման համար արաբները ստիպված էին հսկայական ուժեր կենտրոնացնել: Միայն 737 թվականին է հաջողվում արաբներին ջախջախիչ հարված հասցնել խազարներին: Մինչև 760-ական թվականների սկզբերը խազարները այլևս չէին անհանգստացնում արաբներին:

Զեկուցման ընթացքում ներկայացվելու է Այսրկովկասի ուղղությամբ Իսավրյան դինաստիայի իրականացրած արտաքին քաղաքականությանը՝ ընդդեմ արաբների և Ը դարի ընթացքում դեպի Այսրկովկաս իրականացված խազարական արշավանքները:

Երևանի պետական համալսարան, ասպիրանտ,
vardanyanareg1@yahoo.com

ԴԻՏԱՐԿՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎՐԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻ ԳԱՂԱՓԱՐԻ ՇՈՒՐՁ

1. 11-13-րդ դարերը հայ-վրացական դավանաբանական վեճերի տեսանկյունից ներկայանում են իբրև սրացման շրջան: Այս մասին են վկայում ինչպես միմյանց դեմ գրված կամ թարգմանված մի շարք ջատագովական տեքստերը, այլև 3-4 դավանաբանական ժողովները: Սրան կարելի է գումարել լարվածության առօրեական դեպքերը, ինչիպիսիք են հայոց եկեղեցիների հրդեհը, քաղկեդոնականացումը կամ անարգումը, երկուստեք կրկնամկրտություններ և այլն:
2. Այս լարված իրավիճակը բնականաբար ուղեկցվում էր միմյանց վատաբանելու միտումով, որ առկա է ժամանակի թե՛ հայ, թե՛ վրաց մատենագրություններում: Այս համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 11-13-րդ դարերի հայ մատենագրության մեջ վրաց արքաները ներկայացված են բացառապես դրական լույսի ներքո: Նրանք հաճախ արժանանում են գովեստի, պատկերվում իբրև հայ առաքելականությանը սատար տիրակալներ և անգամ ներկայացվում են իբրև ժամանակի նշանավոր վարդապետերի կողմից օրհնեալ անձիք:

3. Հարց է առաջանում. ո՞րն է այս հակասության պատճառը: Եթե վրաց ուղղափառության ներկայացուցիչները ներկայացվում են բացասական լույսի ներքո, ապա ինչո՞ւ են իրենց արքաները գովաբանվում: Կարծում ենք այս հակասության լուծումը թաքնված է վրաց մատենագրությունից մեզ հասած մի քանի դրվագների ուշադիր քննության մեջ: Եփթուհիմեսու Գրձելու մասին պարականոն շարադրանքում, Դավիթ Շինարարի պատմիչի հայկական և վրացական տարբերակներում, ինչպես նաև Թամար թագուհու առաջին պատմիչի գործերում մեզ են հանդիպում հայ-վրացական դավանաբանական վեճերի պատումներ որոնք լի են կրոնական մոլեռանդությամբ և անգամ սրբապղծության հասնող դրվագներով: Հետաքրքրական է սակայն, որ բոլոր այս պատումներում վիճաբանությանը ներկա վրաց արքաները ընտրում են չեզոք դիրքորոշում: Այս երևույթը շարունակվելով Բագրատ Դ-ից մինչև Թամար թագուհի չի կարող լինել լոկ պատահական մի իրողություն: Կարծում ենք, որ սա միջնադարյան վրաց քաղաքական մի գաղափար է, որի տեսական արտահայտությունը ցավոք մեզ չի հասել: Այդուհանդերձ առկա նյութը թույլ է տալիս եզրակացնել, որ ի հեճուկս վրաց եկեղեցու հարձակվողական դիրքորոշմանը հայ առաքելականության դեմ, վրաց արքաները չեն կիսել նրանց հայեցակարգը և ի լրումն դրան հաճախ հանդես են եկել իբրև լարումը մարեցնող ազդեցիկ անհատներ: Սրան կարելի է հավելել այն հանգամանքը, որ Գոշը՝ իր հայտնի դավանաբանական թղթում հորդորում է

ենեց վրաց արքաներին զսպել վրաց եկեղեցուն:

4 Արդյո՞ք սա վրաց միապետների կողմից միջնադարյան տեսանկյունից հույժ անսովոր դավանաբանական բազմակարծության խրախուսում էր: Բնական է, որ ոչ Կարծում ենք սա մի հեռատես քաղաքական գաղափարի արդյուքն էր, որ նպատակ ուներ վրաց թագի ներքո ստեղծել համերաշխ և տանելի պայմաններ, մի կողմից ներգրավելու համար լրացուցիչ «ոռետուրներ» (տարածքներ և բնակչություն) և մյուս կողմից համակարգելու համար այդ ժամանակվա Վրաստանի կրոնական և ազգային վերին աստիճանի խայտաբղետ պատկերը: Այս տեսանկյունից հայ ժողովրդի ներգրավումը վրաց պետության մեջ առանցքային էր. քանզի պետության ծավալման համար հարմար տարածքների ճնշող մեծամասնությունը կամ մեծամասամբ հայաբնակ էին, կամ ունեին պատկառելի հայկական ներկայություն:

ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏՅԱՆ

Հայաստան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ,

պ.գ.թ. ավագ գիտաշխատող

ԹՈՎՄԱ ՄԻՆԱՍԵՆՑ. ԺԵ ԴԱՐԻ ՏԱՐԵԳԻՐ

ԺԵ դարի հայ մատենագրությունը առանձնանում է հեղինակների, պատմիչների և նրանց ինքնուրույն երկերի սակավությամբ: Սակայն այդ բացը լրացվում է մանր ժամանակագրությունների, տարեգրությունների, հիշատակարանների, վանական պատմությունների և փոքր ժանրի այլ երկերի բազմազան առատությամբ:

Թովմա վարդապետ Մինասենցը՝ տաղանդավոր տարեգիր, գրիչ, ծաղկող, Աղթամարի վանքի միաբան էր, գործել է ԺԵ դարում՝ Դավիթ Գ., Ջաքարիա Գ. և Ստեփաննոս Բ. Աղթամարցի կաթողիկոսների ժամանակ: Նա վերջինիս մորեղբայրն էր, իսկ Թումա միայնակեացը, որ եղել է իր ուսուցիչն ու դաստիարակը՝ իր մորեղբայրն էր. նրա տոհմում շատերը գրագետ և կրթված մարդիկ էին: Նրան աշակերտած գրիչները համարում են նրան «իրենց հոգեւոր հայր և ընտրեալ ու հոչակաւոր փիլիսոփայ»¹ Ընդօրինակել է բազմաթիվ ձեռագրեր /Աւետարան, Մաշտոց, Յայսմաւուրք/, գրել տարեգրություններ, որոնցից բացի գրել է նաև շատ զանձեր ու տաղեր, նվիրված տերունական տոներին և Աղթամարի խաչին: Թովմա վարդապետ

Մինասենցը մեկն է այն քսանից ավելի տարեգիրներից /ԺԵ-ԺԸ դդ./, որոնք պետք է մաս կազմեին Ղեւոնդ վարդապետ Փիրղալեւյանի ծրագրած հետագայում կազմելիք ժողովածուի, և որոնք երկար ժամանակ համարվում էին կորած: Թովմա Մինասենցի տարեգրությունից հատվածներ հրատարակել է Ղ. վրդ. Փիրղալեւյանը իր «Լօտարք Հայոց»-ի հատորում, մեծ չափով հաշվի առնելով թուրքական գրաքննության պահանջները՝ անցանկալի արտահայտությունները, բառերն ուղղակի փոխարինելով զծիկներով կամ կախման կետերով:

ELINA GHAZARYAN

Armenia

Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran)

Researcher, kazarianelina@gmail.com

THE TRADE ROUTES OF THE SOUTH CAUCASUS IN THE 10th-14th CENTURIES

Since ancient times the South Caucasian region has been a node of busy trade routes. International transit routes connecting Asian countries with Russia and Europe were crossing the South Caucasus, the significance of which was changing in different historical periods due to the political, military and economic activities of various state entities that established their rule in the region.

As a result of the gradual weakening and disintegration of the Arabic Caliphate, the relatively stable political situation established in the region greatly stimulated the development of the international transit trade.

The trade routes passing through Bagratid Armenia, and branching off at different points to connect the principal trade and economic centres of the South Caucasus were of primary importance in the 10th century. The merit of the Dvin-Partav route, which connected Bagratid Armenia with the eastern part of the South Caucasus, was especially important in this period. However, later the importance of these trade routes waned.

Starting from the 11th century, the South Caucasus became the target of Seljuk and the Mongol tribes, which were interested in the development of international transit trade and tried to establish their dominance over the trade routes passing through the South Caucasus region. The usual course of the transit trade development, which was sufficiently disturbed during the initial period of the Seljuk invasions and the establishment of their rule, was restored during Mongol rule. During the same period; however, there happened some change in the transit trade routes from the South to the North. Mongol attempts to conquer Asorik and establish control over trade routes to the South failed. Due to this circumstance, the northern roads take on a dominant role along with the decline of the importance in the southern roads.

Important information about the transit routes crossing the South Caucasus, the transit points and the distances between them have been preserved in Persian sources (historico-geographical works, travelogues) related to the 10th-14th centuries, the study of which will provide an opportunity to consider the role of trade routes in international trade from another perspective.

We will consider the trade routes passing through the South Caucasus, the changes in their directions in certain phases of the mentioned period in the context of the main characteristics of the social-economic developments in the region, through a comparative analysis and comprehensive examination of Persian, Armenian and European sources (historico-geographical works and travelogues) of the 10th-14th centuries.

ANI MARGARYAN

China, Armenia

Ph.D. candidate (ABD), Fine Arts Department, Nanjing Normal University, Institute of Arts, NAS RA
animargaryan1962@gmail.com

**A PERSIAN MINIATURE PAINTING AS A KEY TO
UNLOCKING THE ROLE OF THE CHINESE PORCELAIN
IN THE EAST-WEST COMMERCIAL AND CULTURAL
DIALOGUE**

The subject of Chinese export ceramics and its circulation has already moved beyond the traditional confines and methodologies of a sole humanities discipline into the purview of inter-affected analysis using art history, world history, and global trading history. In consequence, China-made porcelain, particularly blue-and-white ceramics, is considered a model for studies of global historical movements and intercontinental communications in the Early Modern Age, and a wide range of artworks directly or indirectly referencing the flow of Chinese pottery pieces are being regarded as mirroring objects of the scope of those compound processes.

The Detroit Institute of Arts (DIA) hosts an intriguing artwork (Riza-i 'Abbasi, Young Portuguese Man, 1634, opaque watercolor, ink, and gold on paper, Detroit Institute of Arts, USA)

that provides opportunities for a series of differentiated interpretations of its content including the hidden messages it conveys as references to the cross-cultural interactions within the context of Chinese ceramics' significance in global trade growing networks of the 17th century, more precisely the impact of dissemination of Chinese porcelain on the worldview of Persian upper classes in the sense of perception of Western people's public image as intermediaries in the framework of international commerce. The art historical and comparative analyses reveal the possible ways those visions shaped the composition of this Iranian masterpiece of the 1630s. The profound examination based on comparing its concepts to the Mughal-Indian, Chinese and Japanese artworks of the time completes the overall picture of the West's, particularly Portuguese input and position in the distribution and movements of those precious objects. Thus, this artwork could embody the "triangle" of Sino-Safavid-Portuguese commercial and cultural relations.

ԳԵՈՐԳԻ ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

Հայաստան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

պ.գ.թ., գիտաշխատող georgmirzabekyan@mail.com

ԸՆԴԱՐՁԱԿ ՀԱՐԿԱՄԱՏՅԱՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ
ԳՈՐԾՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ

ՕՐԻՆԱԶՍՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ

(1590 թ. ԵՐԵՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

1453 թ. Կոստանդնուպոլսի գրավումից հետո Օսմանյան կայսրությունը շարունակեց ռազմական գործողությունները՝ ամրապնդելով պետության սահմաններն ու գրավելով նոր տարածքներ: Կենտրոնաձիգ իշխանության պայմաններում այդ քաղաքականությունն առավել մեծ արդյունքների հանգեցրեց XVI դարում՝ Սելիմ I Յավուզի (1515-1520 թթ.) և Սուլեյման I Քանունիի (1520-1566 թթ.) կառավարման ժամանակահատվածում, որոնց օրոք կայսրությունը հասավ հզորության գագաթնակետին:

Օսմանյան իշխանությունները ինչպես վերոնշյալ ժամանակահատվածում, այնպես էլ դրան հաջորդած տարիներին մեծամասամբ պահպանելով սեփական դիրքերը, ձգտել են ամուր կապ ստեղծել կայսրության մայրաքաղաքի՝ Կոստանդնուպոլսի, և մնացյալ շրջանների՝ հատկապես նոր գրաված տարածքների միջև: Նման պայմաններում ի թիվս այլ

քաղաքականության, կենտրոնական իշխանությունները ռազմական հաջողություններից հետո արձանագրում կամ թարմացնում էին երկրամասերին առնչվող ֆինանսական և հարկային տարբեր տվյալներ, որոնց շնորհիվ Բարձր Դուռը կայուն եկամուտներ էր ստանում: Այդ քաղաքականությունը նպաստում էր նաև տարբեր շրջանների ավելի դյուրին կառավարմանը:

Պահպանվել են տարբեր բնույթի օսմանյան պաշտոնական գրություններ, որոնք առնչվում են դատական, ֆինանսական, կադաստրային, *վաքՖային*՝ հարցերին: Սակայն ուսումնասիրողների համար առավել մեծարժեք են օսմանյան հարկամատյանների (*tahrir defterleri*) ուսումնասիրությունը, որոնք առավել բազմակողմ տեղեկություններ են հաղորդում՝ աչքի ընկնելով բարձր ճշգրտությամբ:

Օսմանյան հարկամատյաններն իրենց բնույթով երկու տեսակի են եղել՝ համառոտ և ընդարձակ: Եթե համառոտ հարկամատյաններում (*icmal tahrir defteri*) օսմանյան իշխանությունները հիմնականում արձանագրել են գյուղերը, դրանց ընդհանուր հարկաչափերն ու համանման այլ տեղեկություններ, ապա ընդարձակ հարկամատյանները՝ աշխարհագիր մատյանները (*mufassal tahrir defteri*) առաջին հերթին աչքի են ընկել տվյալ շրջանի վերաբերյալ ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական վիճակի առատ տեղեկություններով:

Ըստ տարբեր տեղեկությունների՝ Բարձր Դուռը

կայսրության տարբեր մասերում ընդարձակ հարկամատյանի տվյալները թարմացրել է 40 տարի պարբերականությամբ՝ հաշվի առնելով տարբեր ժողովուրդների կենսատարածքի ավանդույթներն ու առանձնահատկությունները: Սակայն օսմանյան իշխանությունների նման դիրքորոշումն ավելի արդյունավետ էր կայսրության ամուր դիրքերի պայմաններում և պատահական չէ, որ Կոստանդնուպոլիսը հարկամատյանների գրանցման աշխատանքներ ակտիվորեն կատարել է 1500-1700-ական թվականներին:

Օսմանյան կայսրությունը, XVI դարի վերջերին օսմանա-սեֆյան պատերազմի հետևանքով (1578-1590 թթ.) գրավելով Հարավային Կովկասն ու Աստրախատկանը, նոր տարածքներում նախաձեռնեց ընդարձակ հարկամատյանների գրանցում: Այդ տրամաբանությամբ է կազմվել նաև 1590 թ. Երևանի վիլայեթի օսմանյան ընդարձակ հարկամատյանը: Բարձր Դուռը այն կազմել է սեփական ավանդույթների համաձայն, ինչը հստակորեն երևում է գրեթե նույն ժամանակահատվածն ընդգրկող այլ երկրամասերի հարկամատյանների միջև համեմատություն-ուսումնասիրություն կատարելիս: Օսմանյան սկզբնաղբյուրի քննության շնորհիվ, ի թիվս այլ կարևոր տեղեկությունների, կարելի է վերհանել ընդարձակ հարկամատյաններ կազմելու գործում օսմանյան իշխանությունների կիրառած օրինաչափությունները:

TAMAR ABULADZE,

Georgia, Ph.D Chief Researcher at the K. Kekelidze National Centre of Manuscripts of Georgia, t.abuladze@yahoo.com

HELEN GIUNASHVILI

Georgia, Ph.D Senior Researcher at the G. Tsereteli Institute of Oriental Studies/ Ilia State University, elenegiunashvili@iliauni.edu.ge

THE 17TH CENTURY UNPUBLISHED GEORGIAN-PERSIAN AND PERSIAN DOCUMENTS FROM THE COLLECTIONS OF THE KORNELI KEKELIDZE NATIONAL CENTRE OF MANUSCRIPTS

Miscellaneous collections of Persian historical documents (farmans and hoqms) preserved at the Korneli Kekelidze National Center of Manuscripts are absolutely unique in terms of their composition, historical and artistic value. Their total number reaches 511 units and dates by the 16-19th centuries, covering the Safavid, Avshar, Zand and Qajar dynasties reign periods.

Georgian-Persian documents of the mentioned epochs are kept in the collection of Georgian historical documents. The most ancient among them is issued by the second half of the 16th century, under the king Simon I reign.

The great part of these documents is edited, though a considerable amount of Persian and Georgian-Persian still remains

unpublished up to the present.

We would like to present some of unedited Persian and Georgian-Persian documents from the K. Kekelidze National Centre of Manuscripts collection:

The Georgian-Persian document (Pd-64) issued by Nazarali Khan (Erekle I), the king of Kartli and later Kakheti in 1698. It refers to the donation for the Davit Gareji monastery complex. The event is related to the attempt of the Georgian kings in the 17th century to restore the monastic life in Gareji, which was destroyed during Tamerline and Shah-Abbas II times, and it became possible to renew in 1690 during the times of the abbot Onopre.

The addressee of Shah Suleiman's order (Pd-443) is Murtaza Quli Beg, who was the beglarbeg of Qarabaghi and the ruler of the southeastern part of Kakheti. The deed concerns several problems of Turkmen tribes (communities) installed in the territory of Georgia.

Shah-Sultan Husayn's decree (Pd-500, 1693) concerns social activities of the beglarbeg of Qarabaghi and the ruler of Kakheti in correspondence to the Sharia laws. An order to the ruler of Kakheti, Kalbali Khan, is attached to the document.

The considered Persian documents are illuminated (shah's seals are placed in richly ornamented rosettes, decorated frames) and extremely significant from an artistic point of view.

ԺԻԼԲԵՐԹ ՄԵՇԵԱՆԲԱՐՅԱՆՍ

Իրան

Պ.գ.թ., գիտաշխատող, jilb_mesh@yahoo.com

**ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ՀԱՐԿԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ
ՀԱՄԱԶԱՅՆ XVI-XVIII ԴԴ. ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԱՅԼ
ՄԿՋԲՆԱՂՔՑՈՒՐՆԵՐԻ**

Հարկահանությունը հանդիսանում էր Սեֆյան Իրանի տնտեսական գործընթացների ամենից կարևոր ոլորտներից մեկը: Պետության եկամուտների կարևոր մասը գոյանում էր բնակչությունից գանձվող հարկերի և տուրքերի հաշվին, այդ համակարգում կարևոր էին հատկապես հաքիմների միջոցով գանձվող և վճարվող հարկերը:

Սեֆյան ժամանակաշրջանում հարկերը հավաքվում էին հաքիմների միջոցով, որոնք այդ գործունեությունը իրականացնում էին իրենց տրամադրված ուղեցույցների համաձայն: Հարկահանման կառույցների և գործողությունների գլխավոր պատասխանատու *մուսթովֆի ալ-մամալեքի* գործունեության վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ են պահպանվել ժամանակաշրջանի պարսկական կարևոր սկզբնաղբյուրներից Թագբիրաթ ալ-մուլուքում:

Պատմության մեջ պահպանվել են նաև հարկահանման ներման հիշատակումներ: Իսքանդար Բեկ Թոր-

քեման Մունշին իր «Թարիխ-ե ալամ արայե Աբբասի» գրքում, փորձելով ցույց տալ շահի բարեհոգությունը, հիշատակում է շահ Աբբասի կողմից հարկերի ներման և զիջումների կապակցությամբ:

Իրանի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նաև հայկական աղբյուրները, որոնց բնորոշ հատկանիշներից է օտար երկրների ու ժողովուրդների վերաբերյալ հարուստ նյութերի ընդգրկումը: Հայ պատմագրիչների մոտ պահպանված նյութերը Սեֆյան Իրանի տնտեսական կյանքի վերաբերյալ արժեքավոր են, որոնց հետազոտելով և համեմատելով պարսկական սկզբնաղբյուրների հետ միայն հնարավոր է ընդհանուր պատկերացում ունենալ հայ ժողովրդից գանձվող հարկահանման գործընթացի և քանակի վերաբերյալ:

Առաքել Դավրիժեցին Սեֆյան Իրանի հարկային քաղաքականության կապակցությամբ, նկարագրում է թե ինչպես նվաճված շրջաններն էին ուղարկվում շահի ներկայացուցիչները, որոնք անմիջապես կազմում էին հարկացուցակներ և դրանց հիման վրա գանձում հարկերը կամ գրանցում գումարները «ի բուն մատեան արքունական դիւանի», որտեղից «անհնար էր եղձանել» գրվածը:

Զաքարիա Ագուլեցու «Օրագրություն»-ը իր հերթին կարևոր է խաս հողերից պարսիկ խաների և հայ մելիքների կողմից հայ ժողովրդից գանձվող ինչպես նաև տարատեսակ հարկահանության եղանակների վերաբերյալ տեղեկությունների դիտանկյունից:

Արևելյան Հայաստանում իրականացված մարդահամարի կապակցությամբ, մեծ ու փոքր գյուղերից և վաճառականներից գանձվող հարկերի վերաբերյալ հիշատակում է ժամանակի հայ հեղինակներից Եսայի Հասան Ջալալեանը: Եղիա Կարնեցին իր «Անձկութեան» մեջ նկարագրում է ժամանակի մաքսային իշխանությունների կամայականությունների մասին:

Վավերագրերը արժանահավատ նյութեր են պարունակում Սեֆյան շահերի հարկային քաղաքականության և գործընթացների կապակցությամբ: Շահ Մուլթան Հուսեյնի երովարտակը վերաբերում է Միրզա Մաջդեդդինի այուրդալի հանձնման և նրանում բնակվող փոքրամասնություններից՝ հայերից և հրեաներից գանձվող գլխահարկին:

Իրանահայությունից կատարված հարկահանումների դիտանկյունից արժեքավոր են Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկչյան վանքի մատենադարանում պահպանված վավերագրերը:

Փաստորեն պետական կենտրոնական վարչական ուղղացված կառույցի տնտեսական գործառույթը հիմնականում ուղղված էր եկամուտների հավաքագրման, բաժանման և սպառման կազմակերպման մեջ: Սեֆյան իշխանավորների հայության նկատմամբ վերաբերմունքն ու տրամադրվածությունը պայմանավորված էր պետության արտաքին ու ներքին կայունության հանգամանքներով թեև պատահում էին դեպքեր, որ երկրի ղեկավարության կողմից

հարկերի որոշակի զիճումներ էր կատարվում: Պարզվում է, որ կրոնական անհանդուրժողականությունը և այդ խնդրից էլնող կրոնափոխության քաղաքականությունը անմիջականորեն անդրադառնում էր հայ ազգաբանակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա և զրկում ժողովրդին իր աշխատանքի արդյունիքից օգտվելու հնարավորությունից ու կասեցնում երկրի բնականոն զարգացումը: Սկզբնադրյունները և վավերագրերը ու նրանցում պահպանված նյութերը կարևոր են պատմական իրականությունների բնութագրման և վերարժեքավորման տեսակետից, որոնք Արևելյան Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության վերաբերյալ ուսումնասիրությունները հարստացնում են նոր տվյալներով:

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայաստան

Պ.գ.դ., պրոֆեսոր ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
sasun-07@mail.ru

ՀԱՅ ԵՎ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒԴՆԵՐԸ ԱՊՇԵՐՈՆՑԱՆ
ԹԵՐԱԿՂՁՈՒ ԵՎ ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
(ՎԱՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ XVIII ԴԱՐԸ
ՆԵՐԱՌՑԱԼ)¹

Պատմական հավաստի հիշատակությունները վկայում են, որ Արևելյան Այսրկովկասի (ներառում է Կուրից հյուսիս պատմական Բուն Աղվանքի և նրանից հյուսիս-արևելք տարածվող մերձկասպյան, ինչպես նաև Կուրի աջափնյա դաշտավայրը և Երասի/Արաքսի ստորին հոսանքից հարավ գտնվող՝ Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի արևելյան՝ Կասպից ծովի առափնյա շրջանները) տարեթնիկ տարածքում վաղ ժամանակներից բնակվել են ոչ միայն աղվաններ, այլև որոշակի հայկական էթնիկ տարր, որն ուրույն դերակատարություն է ունեցել երկրամասի մշակութային և քաղաքական զարգացումներում:

Հայկական լեռնաշխարհից արևելք՝ Կուրի ձախափնյա կում, հայ էթնիկ տարրի վաղեմությունը փաստող բազմաթիվ ապացույցներ կան հայկական աղբյուրներում: Եսայի Հասան-Ջալայանը հավաստում է. «Եւ երկիրն էր (Բուն Աղվանքը - Գ.

¹ Աշխատանքը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի 21Դ-6A163 ծածկագրով թեմատիկ ծրագրի շրջանակներում:

Ս.) բարեկի և շէն և մարդաշատ, թէ հայ ազգօք, որ ի Ղարաբա-
ղու երկրէն ժողովուրդք յուրվք անցեալ էին յերկիրն այն աւելի
քան գտեղականսն. (ընդգծումը մերն է - Գ. Ս.) և եթէ այլ ազգօք՝
որ բնիկ ի յերկրէն են...»: Իսկ Սիմեոն Ա Երևանցի պատմագիր
կաթողիկոսն հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք
հայալեզու և հայակրօն ժողովրդոցն, որք այժմ գոն ի յերկիրն Ա-
ղուանից, հայք են ի բնէ (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»: Ի լրումն
վերոնշյալի՝ ավելացնենք, որ Կուրի ձախափնյակում և մերձ-
կասպյան շրջաններում հայ էթնիկ տարրի վաղեմության փաս-
տը հավաստում են նաև օտար աղբյուրները: Այդ իմաստով
հատկապէս ակնառու է կովկասագետ, կայսերական ակադե-
միայի թղթակից անդամ Յու. Գագեմեյստերի տեղեկությունը.
«Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց
նախաբնակությունը կարող են ապացուցել միայն հայերն ու ու-
ղիները»:

Եվրոպացի հեղինակների գրառումներում արժեքավոր
հիշատակումներ կան նաև Ապշերոնյան թերակղզու և Բաքու
քաղաքի հայերի մասին՝ Այդ է վկայում Արցախի Վաչագան
Բարեպաշտ թագավորի (485-523 թթ.) կողմից 500 թ. Բաքվի
բերդի ներսի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման փաս-
տը: Եկեղեցին գտնվում էր քաղաքի հին թաղում, բերդի ստո-
րոտում, «Կույսի աշտարակի» մերձակայքում՝ հայկական
քարավանատան կից: Պատմական աղբյուրները վկայում են,
որ թերակղզում հայաբնակ գյուղեր էին Բուզովան, Բալախանը,
Մաբունչին, Մաշթաղան, Շաղանը, Սուրախանին և Մարդաքյ-
անը: Հայերն այստեղ բնակություն են հաստատել առնվազն վաղ

միջնադարից և ունեցել են իրենց պաշտամունքային օջախները,
բայց պահպանված առավել հին պատմական հուշարձանները
վերաբերում են միայն XII-XV դդ. Բաքվի շրջակայքում գո-
յություն ունեցած հայկական գյուղական համայնքների մասին
ուշագրավ տեղեկություն է հաղորդում XV դ. սկզբի տեղացի ա-
բաբ աշխարհագրագետ և ճանապարհորդ Աբդ աբ-Ռաշիդ ալ -
Բաքուվին՝ ավանդաբար նրանց բնակիչներին կոչելով քրիս-
տոնյաներ: «Բաքուի... մերձակայքում,- գրում էր Բաքուվին,- կան
շատ գյուղեր և յուրաքանչյուրն ունի ամրացված միջնաբերդ ա-
մրապինդ պատերով: Այդ գյուղերի բոլոր բնակիչները քրիստոն-
յաներ են (իմա՝ հայեր - Գ. Ս.)...»: Արևելագետ, Մոսկվայի համալ-
սարանի պրոֆեսոր Բ. Միլլերը թաթերի, այդ թվում նաև՝ հայ-
թաթերի պատմությունն ուսումնասիրելու նպատակով 1928 թ.
շրջագայելով Ապշերոն թերակղզու վերոհիշյալ բնակավայրե-
րում, ամենուր արձանագրել է անցյալում գոյություն ունեցած մե-
ծաքանակ հայկական եկեղեցիների և գերեզմանատների հետքե-
րի, ինչպես նաև հնաբնակներից լսել է ավանդույթներ այդ բնա-
կավայրերի՝ նախկինում հայկական լինելու մասին՝ XVI-XVII
դդ. եվրոպացի վաճառական-ճանապարհորդների թողած տե-
ղեկությունների համաձայն՝ Բաքուն արդեն համարվում էր
Կասպյան ծովային առևտրի գլխավոր հանգույցներից մեկը,
իսկ մարդատար ու բեռնատար նավափոխադրումները՝ Բաք-
վից Դերբենդ և Պարսկաստանի նավահանգստային քաղաքներ,
գլխավորապես հայ վաճառականների ձեռքում էին²: Այս առու-

² Մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Կասպից ծովի հայկական նավատորմի պատմությունից: «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում»: «Այաս» ծովային ակումբի

մով հետաքրքրական է XVI դարի վերջերին (1579, 1580-1581 թթ.) Բաքու այցելած ճանապարհորդ **Քրիստոֆեր Բուրոյի** տեղեկությունը, որտեղ հիշատակվում է Հակոբ անունով ոմն հայ, որը Կասպից ծովի վրա շահագործում էր 35 տոննա տարողությամբ նավ³: Քրիստոֆեր Բուրոն հետաքրքիր փաստեր է հայտնում նաև Բաքվից հյուսիս գտնվող Նիզաբադ (Նիյազ-Աբադ) ծովեզրյա գյուղաքաղաքից 18 վերստ⁴ դեպի արևմուտք տեղակայված «Հայ գյուղ» անվանվող բնակավայրի մասին, որի բնակիչները զբաղվում էին մետաքսի և տորոնի առևտրով: 1738 թ. Բաքու այցելած անգլիացի վաճառական, ճանապարհորդ **Ջեյմս Շփիլմանի** տեղեկության համաձայն՝ Աստրախանից Բաքու, Դերբենդ և Ռաշտ մարդատար ու բեռնատար նավափոխադրումները կենտրոնացած էին հայերի ձեռքին:

Այսպիսով, հայկական և եվրոպական տասնյակ ճանապարհորդ-ուսումնասիրողների, առևտրականների և կաթոլիկ միսիոներների թողած ճանապարհորդական նոթերի տեղեկությունները փաստում են Ապշերոնյան թերակղզում, մասնավորապես՝ Բաքվում հայերի՝ վաղ ժամանակներից բնակեցված լինելը: Որպես երկրամասի տեղաբնակ և մշակութակերտ ժողովուրդ՝ հայերը մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծեցին հարուստ պատմություն:

25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (2010-մայիսի 14-16), էջ 39-44:

³ Տե՛ս **Հակոբյան Շ.**, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 442, տե՛ս նաև *Англиские путешественники в Московском государстве в XVI веке*, с. 274.

⁴ Վերստը երկարության ուսական հին չափի միավոր է, որ հավասար է 500 սաժենի կամ 1 կմ-ից քիչ ավելի:

TERRITORY AND SACREDNESS IN THE MEDIEVAL GEORGIAN HISTORICAL SOURCES

Territory and sacredness of unity are one of the important characteristics of ethnic or national identity. The feeling of a common territory is actualized at the period of political unification of Georgia. Territorialization creates political and imaginary boundaries between ourselves and others. Territory is not just a geographical category, it is sacred.

Determining the common territory is characteristic of the XI centuries Georgian historical sources. They reflect the missionary or sacred fate of the Georgian people started by establishing the border of the Georgian people, where the participants of this process are biblical characters who create a special association with the territory.

The flood of such information in historical sources is understandable, the rulers of the newly united kingdom needed sacred biographies for longevity. The sense of national selectivity was strengthened more by the sacralization of the territory, which is reflected in several circumstances in Georgian sources of the Middle Ages.

In the 10th -11th centuries Georgian narrative sources, the

